նրա ամբողջ ստեղծագործության արժեքավորումն էր՝ դարասկզբի արևմտահայ գրականության ընդհանուր համապատկերի մեջ:

Գլխավոր բանախոսներից մեկը Տ. Զյոկյուրյանն էր: Հենց սկզբից նկատելով, որ բանաստեղծի «գործն իր մեջ կ'ընդգրկի անցավորն ու անանցը, միտքը զգացման հետ, գեղեցկության արվեստը և արվեստին գեղեցկությունը»՝ բանախոսը այնուհետև ցույց է տալիս, որ «Հեթանոս երգերի» հեղինակը դրան հասել է հետևողական որոնումների ճանապարհով: Բանախոսի համոզմամբ՝ Վարուժանի ստեղծագործությունը հարատև մաքառում է եղել ժամանակի ու միջավայրի դեմ՝ իր ինքնությունը հայտնաբերելու և հաստատելու համար: «Սարսուռներում» երևում են այդ ինքնության առանձին առկայծումները միայն, և դրա պատճառը, ինչպես համոզված է նա, ոչ միայն սկսնակի անփորձությունն է, այլև վանական միջավայրի անձկությունը: Այդ անձուկ միջավայրից առաջին վճռական ելքը «Ցեղին սիրտն է»: Դա հայ բանաստեղծի ճակատագրական տուրքն է ժողովրդի տառապանքին. ինչպես Աբովյանը, Պատկանյանը, Ռաֆֆին, Սիամանթոն, ուրիշները, Վարուժանը ևս «կանգնած օտար երկրի վրա, իր պանդուխտի կարոտով լի հոգին հայ արյունազանդ հողին վրա կը պտտեցնե՝ աղետը երգելով»: Ուշագրավ է հատկապես այս գծի վրա Սիամանթոյի և Վարուժանի ստեղծագործությունների համադրությունը, որի միջոցով բանախոսն այսօր իսկ ընդունելի դիտարկումներ է անում «Ցեղին սիրտի» ոճի, պոետիկայի, իրականության արտացոլման առանձնահատկությունների մասին. «Տառապանքի և հույսի այդ երգին մեջ Վարուժան Սիամանթոյեն կը տարբերի հաճախ մանրամասնությանց նկրտումովը: Մինչ Սիամանթո համադրված և սեմպոլիկ տողերու մեջ ուրույն պատկերներ կ'ստեղծե, Վարուժան կը նկարե գիրք մը. մեկը մեր երևակայության կը խոսի իր արվային տեսիլներու խումբով, մյուս որոշ գծագրություններ կը հորինե մեր աչքին: Վարուժանի տողերը գրեթե միշտ որոշ նյութի մը էությունը կազմող մասերն են, մինչ Սիամանթոյի տողերը երաժշտության մը տպավորությունները կը բերեն չէ թե անոր ձայնական առումով, հապա այդ ձայներուն՝ մեր մեջ արթնցուցած պատկերներու շփոթ, այլ հոյակապ մեծությամբ»:

Բայց հետևելով իր հիմնական թեզին՝ բանախոսը գտնում է, որ հայրենասիրական երգը ևս հայ բանաստեղծի, հայ